

այր մեծարց և սիրելին որ ոչ սակաւ տեղեկութիւնն ետ ինձ, և օգնեաց ի բազում դէպա կօշկակար Պետրոս . . . ուղեցոյցն և թարգմանն իմ Վեհրենքիրպղի, որ ի մանկական հասակի իւրօւմ եմուլ զհայրենիս և ընդ աղջակցաց իւրոց և համաշխարհայնոց եկն բնակեցաւ նախ մերձ Օտեսսա, անտի ի վիւղ մի ոչ հետի ի Տիփիսաց. եռանդուն որ գոյով սորա և անհանդիստ բարուք՝ ոչ սիրէր ի միում տելլոց կալ. ճանապարհորդեալ էր ի համօրէն Ասիա, և ի Պարս թարգման կացեալ առ Երբաս Միրզա արքայորդին Պարսից զամա ութիւն, և յետ մեսանելց նորա գարձ արարեալ առ Հայրենակից ու Գիտէր զքանի մի լեզու եւրոպացւոց և Ասիացւոց. Գերմաներէն, Գաղղիարէն, Մուսակերէն, Զերքեզարէն, Տաճկերէն, Հայերէն, Վրացերէն, Պարսկերէն, Քիւրզերէն և ըն. վասն որոյ անսպառ գանձ էր զամա իմ: — Զարմանալի թափանձիկ և սուր միտո ունէր մինչ զի յընթացս վեց շաբաթու ուսաւ անմերի զեղում որում անտեղեակ էր միանդամայն. ընդ այս սիմի հանճարոյ, միացեալ էր և բանաստեղծականն աշխոյժ. զիտէր զանմիւ աւանդութիւնն, երգս և վէպս (մասալ, հեքեաթ) ազգաց, որոց ի տես չոքաւ, ուստի թէ զէպ լինէր մեղ ի միասին ննջեր երթալ ուրիքի, ի տուէ կամ ի զիշերի զուարձացուցանէր զմեզ. թէ և իսկզբանն անդ դժուարանայր յամօմոյ ասեղով, թէ առասպելարանութիւնք և գեղշկական զբոյցք չեն արժան լսելեաց ուսեալ ճանապարհորդի. ալ իրբեւ յետ մի աւուրց մատերմացաք, ի միասին ուտելով, ըմպելով, ննջելով ևն, մերկացաւ ինձ զոր զիտէր:

Ի Տիփիսաց գէմ եղեալ ևկաք ի մերձակայ զիող մի Գերմանացի գաղղմականաց, ուր տեսաք զմեծաշուազկ Գերմանացի բնախոյցն Պոկտոր Մուրիկ Վագնէր, զրաղեալ ի կարգաւորել զհնագիտական և զշագուազիւս իրս երկրին, զորս ժողով վեալ էր ի ճանապարհորդութիւնն իւրում. Սապրդ աւարտեալ զուղկւորութիւնն գառնայ յեւրոպա յերևան հանել զմաստակս իւր զզուլով հետազոտութեանցն:

(Ծառահանդեւէ):

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՌ ԲԵՎԱՐԵՆԵԼ.

Եկերկայ տարւոյս Երարտատ ամսագրոյդ Երդ Զ.-դ և Բ.-դ թուոց մէջ Հայր Պահան Բաստամեանցը իւր հրատարակած յօդուածով աշխատասիրածէ յոյց տալ, թէ ի՞նչ ազգերից, ո՞րպիսի անձինք դաշնելով Հայոց մէջ և ընդունելով նոցա կրօնքն և լեզուն՝ միացած են նոցա հետ ազգութեամբ:

Եա իւր յօդուածոյն մակազիր դրածէ այս խօսքը “ Թաէ ի՞նչպէս կաղմուեցաւ Հայոց Ազգը , և հետեաբար յիշելով նոյն ցեղերի Հայութեան ենթարկութելը և հետելով իւր յօդուածոյ մակազրութեանը տառում է ” “ Աեր ազգը նոյնպէս բաղկացաւ զանազան մասներից, իսկ զլխաւորապէս երկու հեռաւոր և օտար ցեղերից , ” իւր այս համոզմունքը հիմնելով Հայկական պատմազրի հետեւալ խօսքերի վերոյ, զոր ասէ նո “ Յիշէ և աստանօր պատմութիւնը, հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ, առ երկայնանստիւ միով լերամբ բնակի ալ յառաջադրոյն արք սակաւք ինքնակամ հնազանդեւ զիւցազինն, : Կոր. զիրք Ե. եր. 22.23:

Հ. Բաստամեանցի սոյն մակազրութիւնը և հետեւանթաց կարծիքը ըստ բովանդակութեան յօդուածոյն պարունակելով իւրեանց մէջ հակադրութիւն և երկրայութիւն մեր նահապետական ծագման և հարազատութեան մասին՝ պատճառում են ինձ յայտնել համառօտութեամբ իմ կարծիքս դորա համար, խնդիրն ազգային ըլլալով :

Որպէս յայոց է հապճուիլ կամ բառիանալ  
կ'նշանակեն միոյ ամբողջութեան զանա-  
զան մասներէ միանալը և գոյաւորիլը, և  
հետեւաբար, եթէ նոյն կազմեալ կամ բաղ-  
կացեալ մարմնոյ կազմող մասունքը անջա-  
տենք յիրերաց՝ նորա ամբողջութիւնն ևս  
կ'աւրի և կ'անհետանայ: Այւ համեմատա-  
բար, եթէ՝ Հայոց ազգը համարենք կազ-  
մեալ և բաղկացեալ ի զանազան մասանց,  
եկամուտ ցեղերով, ըստ ասութեան ։  
Քաստամեանցի, և կամենանք որոշել և  
բաժանել նորանից այդ միացեալ եկամուտ  
ցեղերը, մասնատելով նորան նոցա մէջ՝  
պիտի կորուսանէ նա իւր ամբողջութիւնը  
և անհետանայ այդ բաժանման մէջ: սա-  
կայն Հայոց պատմագիրը յիշելով այլ  
և այլազգերէն Հայոց մէջ զալթելը և նոցա  
հետ միանալը՝ երբէք չէ տալիս մեզ իրա-  
ւունք համարել Հայոց ազգը կազմեալ և  
բաղկացեալ տարրեր ցեղերով, կամ թէ՝  
նոյն է ասել, ժողովածու այլասեռ բաղ-  
մութիւն, որով կարողանալինք նորան  
դատել այդու մակարերութեամբ, այլ ընդ  
հակառակն՝ այդ եկամուտ ցեղերը թուե-  
լովն ևս, նոյն պատմիչն՝ հայկական հարա-  
զատութեան իրաւունքը և ծշմարտու-  
թիւնը դարձեալ ճանաչում է իսկական և  
անհերքելի, ցոյց տալով որ, Հայոց ազգը  
սերեալ է և յառաջացեալ է միմիայն մէկ  
նախահօրից, մէկ անհատից, այն է բարե-  
պաշտ և քաջ և վաեմափառ Հայկից, և  
ոչ թէ՝ մէկ քանի նախահօրերից, որով և  
նորանից սերեալ թէ անցեալ և թէ ներ-  
կայ ժողովուրդն ժառանդում են նորա  
հարազատ որդիք լինելու փառքը, ոչ եր-  
բէք կազմեալ և բաղկացեալ համարուելով:  
Եւ նոյն պատմազրին համաձայն կ'զա-

տենք, համարելով որ, Հայոց ազգը նոյն  
կ'մար եթէ յիշեալ ցեղերը նորա հետ  
միանային և եթէ չ'միանային, և կամ թէ  
միանալուց յետոյ գարձեալ անջատուեին  
կամ թէ չ'անջատուեին, օրինակի աղա-  
գաւ՝ մէկ հօր բազմազաւակ գերդաստուն,  
թէև կրէ իւր մէջ նա ևս՝ զանազան յար-  
եալ որդեղիրներ, դարձեալ համարուելու  
է նա միաւրմատ և անբաղադիր: Կամ  
այլ ևս՝ ծովը իւր որակութեան մէջ նոյն է,  
թէ և միանում են նորա հետ զանազան  
գետեր. և այդու պատճառաւ ևս Հայկայ  
սերնդոց հետ զանազան ցեղերից եղայրա-  
ցեալ անձինքը և նոցա սերունդները հա-  
մարելու ենք, իսկապէս Հայկական հա-  
րազատութիւն և համարիւն գերդաս-  
տան՝ նոցա՝ Հայոց հետ հոգւով և ար-  
եամբ և կրօնիւ և լեզուաւ միանալու  
անբաժանելի շաղկապը և ընտանեկան  
կեանքը ընդհանուր և կեղրոնական համե-  
մատութեամբ առաջի աչաց ունելով և  
ընդ դատողութեամբ արկանելով:

Ուրեմն՝ ըստ իս, ։ Քաստամեանցը  
իւր յօդուածոյ խորագիրը գրելով՝ “թէ  
ի՞նչպէս կազմուեցաւ Հայոց ազգը, և  
հետեւաբար առելով թէ” ։ Մերազգը նոյն-  
պէս բաղկացաւ զանազան մասներից կամ  
ցեղերից, իսկ զինաւորապէս երկու հեռա-  
ւոր և օտար ցեղերից, ։ իւր խօսքը և  
միտքը հեռացնում է մեր պատմազրի  
ենթադատութենէն՝ և որպէս կարծեմ,  
փոխանակ կազմեալ և բաղկացեալ հա-  
մարելու հայկական սերունդը՝ նորա հետ  
միացեալ ցեղերը յիշելու պատճառաւ՝  
պատշաճ կ'լինէր եթէ անուանէր նոյն  
ցեղերը միացեալ ցեղեր կամ մասունք, և  
ոչ թէ՝ կազմող կամ բաղկացուցիւ ցե-

զեր կամ մասունք, և հասկանալի է թէ՝  
ի՞նչ կ'նշանակէ միացեալ ասելը, և ի՞նչ  
կ'նշանակէ կազմող կամ բաղկացուցիւ  
ասելը, նկատմամբ ոյն խնդրոյս:

Եղիս Ա պարտադիք Ք առլուկանց.

Ի ՞ ՞ Շ ա մ ։

## Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

### ՑՈՒԿԻ ՄՈՎՍԻՍ

ՅԵՐԻՊՈՐԴՈՒՄՆ ՊԱՏՈՒՔ ԵՒ ԿԱՐԿԱՏԷ ԶԾՈՎՆ  
ԿԱՐՄԻՐ:

(Ժ. Ա. Շ ա մ ։ Հ ա յ ո ւ թ ։)

Բայց այս ժողովուրդ է Երրայեցւոց,  
Որ կողովունալ է զգանձ Եղիպտացւոց,  
Զօսկի և զարծամի, զսնօթ պատուական,  
Արթերեալ, կազմեալ է զայս կարաւան:  
Ճզնի Փարաւոն սանձել զայն խուժան,  
Որ չորս հարիւր ամ կայր ի ստրկութեան,  
Երդ ի բաց բառնին վանդակք դարաւորք,  
Ի փախուստ Ճեպեն խարկանք բի բաւորք:  
Նախնիք այս ազդի անասնադարման,  
Եւթանասուն թուով աստ պանդիստեցան,  
Ա անեալ ի սովոր յերկրէն Քանանու,  
Գլուխն զապաւէն ի տան Յովսեփու:  
Իսկ Յովսէփ ծառայ էր արծաթագին,  
Ա աճառեալ յեղբարց ի Թօթայմ զաշտին,  
Եւ հասեալ ի ծայր աւագ պետութեան,  
Եղեւ համազգեաց ապաստանարան:  
Եւ Եղիպտացիք ոչ մոռանային,  
Զի մինչ բուն բնակք տնանկանային,  
Արհամարհ հոմիւք գտեալ հացալից,  
Եին Եղջանին աւուրց բերկրակից:  
Ա ասն այն թագաւորք հիւրնկալ երկրին,  
Տեսեալ թէ այս եկք յանրաւս ստեղնին,  
Ա ամելով կոստր զընել այն աճման,  
Պարաւանդեցին լարիւք զերութեան:

Զարմանալի էր վիճակ այս տահմին,  
Որում ետ Որ են զանուն իւր հօտին,  
Սա էր սերունդ տան Արրահամ ծեղոյն,  
Հօրն Խաչակայ միամօր որդուցին:  
Թէ հայրն Աբրահամ և թէ Խաչակակ  
Եղեն յԵղիպտոս երբեմն զաղթակ,  
Ա յլ Ելին կրկին յօտար յայն երկրէն,  
Եւ ի Պաղեստին գտին զարձ անդրէն,  
Սպա էին արք արզարակորով,  
Վայելեալ ի Տեառն հայրակնամ զորով,  
Վասն այն նա լինէր միշտ նոցա պաշտպան,  
Եւ նոքա ի նա թէ և ապաստան:  
Եւ Խաչակայն իսկ Յակոբ որդին,  
Էր աւանդապահ իւրոց Արարէն,  
Ա յլ երկոտասան որդիք սուրբ ծերջն,  
Ա չամայնք արժան տիրական սիրյն  
Նա ի մոլեղնիլ սովուն ի Քանան,  
Եծ յԵղիպտոս զայս տուն Երրայական,  
Ցորեան ետ նոցա զիւր պարարտութիւն,  
Եւ մեղը ի յագուրդ զանլուր քաղցրութիւն,  
Ա յլ նոքա փոխան Տեառն այս Երանսոնաց,  
Մոռացան զնա, ուրացան զնասուած,  
Նախընտիր վարկան զզաշտօն երնջուց,  
Հեթանոսական խաւարին զալուց:  
Զորս որպէս անզօր տղայս ստնղեաց,  
Երեք հարիւր ամ զգուեաց փայփայեաց,  
Հարիւրամեակ մի մերժեալ ի խնամոց,  
Ետ երկրպագուաց օտար աստուծոց:  
Ծանեան իւրատեալք զնչն ամենազօր,  
Դարձուցին առ նա զիւրեանց սիրտ բոլոր,  
Եւ նա զՄովսէս ետ նոցա պաշտպան,  
Խզել զերկամի շլթայս զերութեան,  
Յաղագս միոյ յանդուզն բանի,  
Ով ետ քեզ զաթոռ կամ ցուպ իշխանի,  
Ամս քառասուն յամեաց փրկութիւն,  
Մովիսի տուաւ խաշանց տեսութիւն:  
Ա յն ցուպ զոր Մովսէս առ ընդ հովութեան,  
Արհաւրօք ելից զտուն Եղիպտեան՝  
Մինչ ի գոլ ի զեղջ խիստ Փարաւոնի,  
Եւ տալ արձակուրդ տան Խորայելի:  
Եկեր Խորայել զպասէք փրկական,  
Եւ յուղի շարժեաց զիւր մեծ կարաւան,  
Անցեալ ընդ երիս կէտս իջաւանած,